

ըէն մին ըլլալ: Եւ քանի որ իւրաքանչիւր անհատի յատուկ է հետաքրքրուել ուրիշ ազգերի լեզուով, գրութեամբ և ահա մեր առաջն է դրած մի հանրածանօթ նիւթի բազմալեզուեան թարգմանութիւնը ընդիր հրատարակութեամբ, որը կարող է շատ շատերի այդ բնական հետաքրքրութեանը յակուրդ տալ: Նոյնպիսի մի գիրք էլ հրատարակել են Վենետիկեան Մխիթարեանները թարգմանելով Ներոէս Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» ի առաջի տունը, որի օրինակները առիթ եմ ունեցել տեսնելու երկու սրօփեսորներին մօտ, որոնք այցելելով ս. Ղազարու վանքը իբրեւ յիշատակ գնել էին:

ԴԱՍԱԳԻՐԻՔ ԿՐՕՆԻ ՈՒՂԵՑՈՅՑ ՀԱՅ ԿՐՕՆՈՒՍՈՅՑԻ ՀԱՄԱՐ.
ՆՈՐ ՈՒԽՑԻ ՆԻՒԹԻ մշակութիւնը, Հատոր Բ. մասն Ա. Տետր Ա.
ԴԱՍԱԽՕՄԵՑ Ներսիսեան գպրանոցի ստորին դասատ. աշակերտներին ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՑ. Տփլիս 1893.

Այժմ հայր Սահակը յայտնի է մեր մէջ իբրեւ բարեխիղճ, աշխատասէր, գիտութեան ծառայող մի անձ, որ առանց սղմուկ հանելու շարունակ աշխատում է և արդէն հրատարակել է մի շարք կրօնի ուսուցման համար նշանակած ձեռնարկներ, որոնք մեծ ժողովրդականութիւն են ստացել: Թէ ինչքան մեծ քանք է գործ դրել հայր Սահակը իւր գրքերի կազմելու ժամանակ, այդ մենք իմանում ենք նրա «Հին Ուխտի» յառաջաբանից էջ III⁴: Նա խոստովանում է, որ իւր աշխատութիւնը մի կատարեալ գործ չէ, քաւ լիցի, նրա նպատակն է եղել հետաքրքրութիւն շարժել, ուստի ընդգրկել է մի ձև, որ ցանկանում է շատ շատերից ընդունած տեսնել, որովհետեւ փորձով գիտէ, որ այդ լաւն է: Ահա նրա խօսքերը. «Այս ձևը քանի մի տարի է ուսումնաւորութեան առարկայ դարձել ինձ համար և իմ Զեմ-Ք ԲԵՐԱՍ ՏԵՍԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ երեք տարի

1. Ծան. Դասագիրք կրօնի. Հին-Ուխտի նիւթի մշակութիւնը, Հատ. Ա. Տփլիս, 1888.

որպէս ուսուցիչ Ներսիսեան գտնանոցի ստորին դասատանց ԳՈՐԾՆԱԿԱՆԱՊԷՍ ՓՈՐՁԵԼ ԵՄ: Կեանքի մրկածութիւնը ակնհայտ է միակ միութեամբ ինչ որ այն է եղել, որ ցանաժ սերմերը ոչ ճանապարհի, ոչ ապառաժի և ոչ փշերի մէջ են ընկել: Նոքա որոնք ականատես և ականջալուր են եղել, կարող են վկայել, որ արդարութեան սահմանը յարգում էմ:

Թէև այս աշխատանքը ի լոյս ընծայելու գիտաւորութիւնը չունէի դեռ ևս, իմ ցանկութիւնն էր էլի երկար տարիներ ՄՇԱԿԵԼ, գործնական ասպարիզում, բայց հանգամանքները և բարի ցանկացող բարեկամներն խորհրդին ստիպուեցայ չհակառակել:

Ո՞ր քարասիրտ ընթերցողի վրայ չեն ազդիլ այդ սրտաբուխ խօսքերը, ո՞վ այնքան յանգուկն կլինի, որ ըստ արժանւոյն չի գնահատիլ մեր մանկավարժի տեսական և գործնական փորձի վրայ հիմնուած գեղեցիկ գործը և նրան ուսաննայ չի կանչի: Ուրախութեամբ արձանագրում ենք, որ մեր հայ հասարակութիւնը, մեր ուսուցիչների խումբը, մեր լրագրութիւնը չղացան ԳԱՍԱԽՍՍԻՆ գովել, նրա գիրքը հռչակել իբրև մի ընդիր, օրինակելի ձեռնարկ, մինչև իսկ Տփլիսի հայերէն գրքերի հրատարակչական ընկերութիւնը իւր հաշուով գնելով տպել տուեց գրքի Ա. հատորը:

Ընդհանուր գիտնական աշխարհում ընդունուած սովորութիւն է, որ իւրաքանչիւր փոքր ի շատե գիտնական կերպարանք կրող աշխատութեան մէջ, ևս առաւել դասախօսութեաց մէջ, յիշում են, եթէ ոչ դասախօսութեան ընթացքում, գոնէ ներածութեան կամ յառաջաբանի մէջ, այն գլխաւոր աշխատութիւնները, որոնցից հեղինակը կամ անմիջապէս օգտուել է օրինակներ, մօքեր փոխ առնելով, կամ նոքա ծառայել են նրան իբրև ուղղութիւն, ծրագիր ցոյց տուող: Այդ յիշատակութեան նպատակը շատ պարզ է և սրբացած. առաջին երախտագիտական և բարոյական պարտքը թելադրում է՝ յիշելով նոցա, յաւերժացնել մարդկութեան թէև շատ չնչին ծառայութիւն մատուցած անձի անունը և միւս կողմից էլ մեծ դիւրութիւն է տրւում յաջորդ սերնդին, ճանաչել մի որ և է մօքի անմիջական հեղինակին և պէտք եղած դէպ-

քում կարողանայ նրան գիմել: Հայր Սահակը կարիք չունէր յիշել գասախօսութեան ընթացքում այդ տեսակ բարերարների անունները, որովհետեւ նա իւր գասերը խօսում էր գեռ անդարգացած մանուկներին, ոսկայն այլ է եթէ նա «Հայ կրօնութեան» համար ձեռնարկ է հրատարակում: Մենք հաստատապէս համոզուած ենք, որ մեր կրօնութեան մէջ կան շատերը որ գիտեն մի որ և է օտար երասպակոյն լեզու, իսկ կան նաեւ որ մի քանիսը գիտեն, հեռւապէս նոքա կարող են դիւրութեամբ օգտուել ի հարկէ կարիք զգացած ժամանակը, իսկական աղբիւրներից: Բայց արժանապատիւ հայրը մոռացել է այդ անել և գժբախտաբար դրա համար հիմունք է ունեցել:

Թէ Հայր Սահակը օգտուել է ուրիշ ձեռնարկներից, և աւելի քան օգտուել, ուսանց յարմար համարելու աղբիւրները յիշել, այդ ակներեւ է և մի տեսակ արատ է, որ յաճախ նկատվել է և նկատուում է իւրեանց մանկավարժ ևն ախտոգոս վերադրող հայ հեղինակների մօտ: Նրա բոլոր գրքերը, որոնց վրայ նա երկար ժամանակ իբրեւ թէ աշխատել է և գեռ շարունակում է մինչև օրս էլ տեսակ անասել և գործնական անասել աշխատել, բառացի, ստրկական թարգմանութիւն են Ռիչարդ Շտաուդէի կրօնի գասագիրք աշխատանքի, որոնց վրայ իրաւէ Շտաուդէն գործնականապէս և տեսականապէս տարիներ է տքնել առանց ի հարկէ կարողանալու նախատեսել, որ ապագայում իւր հայրենիքում սովորողներից մէկը այնքան համարձակութիւն կունենայ, որ չքաշուելով ուրիշի գործը իւրեան կը վերագրի և որ այդ օտարի միւս հայրենակիցներից մի քանիսը այդ իմանալով, յանուն կեղծ ընկերասիրութեան, այդ տեսակ վարմունքը, այն էլ մի կրօնութեան քահանայի կողմից, գաղտնիք կը պահեն: Եւ կը ցանկայի այս տեղ առաջ բերել, առանց անունները տալու այդ գրքերի թարգմանութեան և հրատարակութեան հանրածանօթ գաղտնիքի պատմութիւնը, ինչպէս որ ինձ պատմեց գործին սկզբից մինչև վերջը լաւ ծանօթ անձինքներից մէկը:

Տէր Սահակը Ներսիսեան գաղափարներում ուսուցչութիւն ա-

նելիս ձեռնարկ է քնդրում յիշեալ հեղինակի աշխատութիւնները, որոնք են. 1] Die biblischen Geschichten des Alten und Neuen Testamentes. Zusammengestellt von Dr. Richard Staude. Dresden. 1883: Համեմատիւ Տիխիսի հայերէն գրքերի հրատար. № 21. Սրբազան պատմութիւն Հին—Ուխտի աշակերտաց և աշակերտութեան համար, Հատոր Ա. աշխատասիրեց Սահակ քահանայ Սահակեանց, Տիխիս 1888. և Սրբազան պատմութիւն Նոր—Ուխտի իսկ ուսուցիչների համար գրած ձեռնարկի երնագիրն է:

2] Präparationen zu den biblischen Geschichten des Alten und Neuen Testamentes, nach Herbart'schen Grundsätzen ausgearbeitet von Dr. Richard Staude, Erster Teil: Neues Testament. Ահա գերմանացու այս գաւազդներն են, որ մեր արժանապատիւ Հայրը ամբողջ տաս տարի է գործ դնում թարգմանելու համար, որպէսզի յերջում ուրիշի փետուրներով իրան զարդարի: Երբ թարգմանութեան առաջի մասը պատրաստ է լինում, արժանապատիւ Հայրը գիտում է մեր պաշտօնանկ և պաշտօնում եղող յայտնի երկու խմբագրերին, մեր եւրոպական հռչակ ունեցող մանկավարժին, իւր մի քանի ազնուամիտ, մտերիմ բարեկամներին և նորա մտերմաբար խորհուրդ են անում և յճուում ի հարկէ իբրեւ «բարի ցանկացող բարեկամներ» առիպել «արդարութեան սահմանը յարգող» քահանային, որ նա իւր ցանկութեան համաձայն այլ ևս չտոյտի երկար տարիներ գործնական առարկի դուռ մշակմանը, այլ օգտուի բարեհաջող հանդամանքներից և բաւական համարելով այն գործնական և տեսական փորձերը, որ նա ձեռք էր բերել երեք տարուայ ուսուցչութեան ժամանակ և առանց կարմրելու, առանց խղճի խայթ զգալու թարգմանութիւնը իբրեւ սեփական աշխատանայ արգիւնք հրատարակի: Այդ հրատարակական գաղտնիքի (Öffentliches Geheimniss) լուրը հասնում է մինչև Գերմանիա. Հայր Սահակի նախկին հայ ծանօթները գերմանական մասնագիտական թերթերի մէջ գովասանական ծանօթութիւն են տալիս նոր լոյս տեսած գրքերի մասին, բայց միևնոյն

ժամանակ մոերմաբար յայտնում են իւրեանց սրտիեսորին. աշխատանքի իսկական արժէքը և ինչ լինելը: Թողնում ենք ընթերցողին երևակայել, թէ ինչ տեսակ կարծիք կարող է կազմած լինել ազնուամիտ գերմանացի պրովեսորը հայերիս գովելի յատկութեանց մասին: Եւ ահա այդ մարդիկը, գիտութեան ներկայացուցիչները իւրեանց ընկերին օտարի առաջ սեւացնելու նպատակաւ, յայտնում են նրա գաղտնիքը օտարին, բայց վախենում են մեր հասարակութեան առաջ դուրս գալ և ճշմարտութիւնը երևան հանել, կամ եթէ չեն էլ վախենում, այնքան սահմանափակ են, որ կարծում են թէ վատ բան արած կը լինին, եթէ իւրեանց բարեկամի վատ, եղիելի վարմունքը մերկացնեն, թէկուզ այդ կարծեցեալ բարեկամը ոչ եթէ մի անհատի, այլ ամբողջ հասարակութեան առաջ է մեղանկել և դեռ շարունակում է մեղանկել: Նոյն այդ անձինքը բոլորովին այլ գոյնով են հասարակութեան ներկայացնում մեզ երբ անձը փոխում է. ասել է նոցա համար ոչ թէ գործը նշանակութիւն ունի, այլ թէ ու է գործի հեղինակը և ըստ այնմ. նոքա կարող են մի դէպքում մի գործ գովելով երկինք բարձրացնել, միւս դէպքում նշանանման գործի հեղինակին աշխատել բարոյապէս և նիւթապէս օսանել:

Մեզնից ոչ ոք դեռ չէ մոռացել, թէ ինչ մեծ ազմուկ հանեցին մեր եկեղեցու ջատագով և նրա հնաւանդ սովորութեանցը աւանդապահ կործեցեալ բարեկամները, երբ իմացան որ Հայր Սարգիս Բէկնազարեանցը իւր կրօնի դասագրքի համար դիմել է մի քանի օտար աղբիւրների, որոնց նա բարեխղճաբար յիշել էր իւր յառաջաբանի մէջ և նրանցից թարգմանել է այնպիսի մասեր, որոնք յատուկ են բոլոր քրիստոնէական եկեղեցիներին և ահա հէնց այդ պատճառաւ նրա գիրքը հրատարակեցին իբրեւ մի հերձուածողական գրութիւն, իսկ հեղինակին հերետիկոս:

Այդ գրքի քննիչները անկասկած իրաւունք ունէին յատուկ ուշադրութիւն դարձնել գրքի թարգմանած մասերի վրայ, որոնց մէջ կարող էին հեշտութեամբ ներս սպրդած լինել մեր եկեղեցու ոգուն հակառակ մտքեր, եթէ նոքա իւրեանց քննութեան մէջ արդարութեան սահմանից դուրս եկած չլինէին և ուղեցոյց

չունենային նեղ, սահմանափակ կուսակցական ոգին. այս այսպէս լինելուց յետոյ՝ ինչքան առաւել ուշագրութեան արժանի է Հայր Սահակի գրքերի անաչառ քննութիւնը, որոնք ամբողջապէս թարգմանած են: Այդ գրքերը գրել է մի բողոքական դասաւորու, բողոքական մանուկներին քրիստոնէական սկզբունքները ուսուցանելու նպատակաւ. նա իւր աչքի առաջ ունի բոլորովին այլ պայմանների մէջ մեծացած, այլ երկրի, օգի, այլ ընտանիքի մէջ կրթութիւն ստացած մանուկներ, հետեւապէս ինչքան ներելի է մի մանկավարժի կողմից առանց մի որ և է փոփոխութեան թարգմանել այդ տեսակ ձեռնարկներ հայ մանուկների համար: Մենք կարծում ենք Հայր թարգմանիչը, կամ եթէ կուզէք դատախօսը կըհամաձայնուի մեզ հետ՝ եթէ ասելու լինինք, մի գիրք հայացնելու համար դեռ բաւական չէ որտեղ գրած է «գերմանացի մանուկ», նրա տեղը դնենք «հայ մանուկ», կամ «Կարլոս Մեծ» ի տեղ «Ներսէս-Մեծ» ևն: Սակայն կարող են մի քանիսը այս տեսակէտը այնքան ծանրակշիռ չհամարել ասելով՝ որ փորձնականապէս արդէն ապացուցուած է, թէ այդ թարգմանութիւնները ծառայել են նաև հայերի համար իբրև լաւ ձեռնարկներ. իսկ մենք կասենք՝ նոցա այդ հետեւանքը ուղղակի նրանից է առաջացել՝ որ գերմանացի գիտնականը, ինչպէս այդ յատուկ է գերմանացի գիտնականներին, հիմնովին ծանօթ լինելով մանկավարժութեան տեսութեանը, դրա հետ միացրել է նաև իւր փորձնական եղանակաւ ձեռք բերած գիտութիւնը և այդպիսով կարողացել է այնպիսի ձեռնարկներ պատրաստել, որոնք սարունակում են իւրեանց մէջ ընդհանուր քրիստոնեայ մանուկներին դիւրամբռնելի կէտեր, ուստի հայ ուսուցիչը կարողանում է նոցա միջոցով գրաւել հայ մանկան ուշագրութիւնն ևս, մանաւանդ որ չունինք ուրիշ աւելի լաւ ձեռնարկներ, բայց զրանից դեռ շփեալ է եզրակացնել, որ նոքա պէտք է անփոփոխ մօտք գործեն նաև մեր ուսումնարանների մէջ: Ուստի մենք կարծում ենք՝ սրբազան պարտք է մեր մանկավարժների համար, եթէ ի հարկէ նոքա ոչ թէ լոկ մանկավարժի տիտղոսն են կրում, այլ գիտեն նաև այդ գիտութիւնը և ըմբռնել են նորա պահանջները, բա-

ւական համարեն իւրեանց աններելի լռութիւնը և հանգէս գալով ցոյց տան, թէ այդ դասագրքերը մանկավարժական տեսակէտից ինչքան յարմար են մեր մանուկներին:

Այժմ մի կտրւի թողնելով մանկավարժական խնդիրը, անցնենք մի այլ ծանրակշիռ խնդրի. այն է կրօնականի: Հայր Բէկէնազարեանցի գիրքը քննեցին՝ ենթադրելով, որ նրա մէջ կան օտարամուտ մտքեր, որովհետեւ նա օգտուել է օտար աղբիւրներից, այժմ մեր առաջ դրած է մի բողոքական հեղինակի դատագիրը և այդ գիրքը մեր բոլոր ուսումնարաններում ամենաընդունուածն է: Հայր Բէկէնազարեանի գիրքը նպատակ ունի ուսուցանել մեր եկեղեցւոյ դաւանանքը հայ մանուկներին, իսկ Հայր Սահակեանի կրօնուսոյցների ձեռնարկը սովորցնում է հայ ուսուցիչներին ու Վիրքը բացատրել, հասկացնել մանուկներին, ուրեմն երկուսի մէջ էլ կարող են բաղմամբիւ փափուկ դաւանաբանական կէտեր լինել, որոնց այս կամ այլ կերպ հասկանալուց և բացադրելուց են ծագում քրիստոնէական եկեղեցիների տարբերութիւնը:

Մենք յուսով ենք, որ Հայր Սահակը այնքան հմուտ կլինի մեր եկեղեցու առանձնայատկութեանց ուսման մէջ, որ նա օտարամուտ բացատրութիւններ մտցրած չի լինիլ իւր գրքի մէջ, բայց մի և նոյն ժամանակ չենք կարող հաւաստի լինել, քանի որ ամբողջը՝ առանց փոփոխութեան մի թարգմանութիւն է, որ գրքի մէջ ներս մտած չեն լինիլ գուցէ անգիտակցօրէն, թարգմանի կամքին հակառակ, կէտեր, որոնք չպէտք է լինէին:

Մեր կարողութիւնից վեր է համեմատութեամբ ի լոյս հանել այդտեսակ կէտեր, թող այդ կատարեն նոքա, որոնք հմուտ են և ի սաշտօնէ կոչեալ են իբրեւ սլառասիրտնատու անձնաւորութիւնք մեր եկեղեցու հաստատուն սահմանութեան, իսկ թէ այդպիսի կէտեր կան գրքի մէջ, գրանում մենք համոզուած ենք հետեւեալ փաստի հիման վրայ: Երբ ես իմացայ գրքի թարգմանած լինելը և այդ բանը մի քանի տեղ յայտնեցի, այն ժամանակ ինձ ցոյց տուին մի գրութիւն, որի մէջ մի առ մի առաջ էին բերուած բաւական փաստեր, թէ ինչպէս դասագիրք կազ-

մայր՝ ենթարկուելով բողոքական ազդեցութեան, բացատրութեանց մէջ շեղուել է մեր մէջ սովորական ընդունածից: Այդ նկատողութիւնն անողը չգիտէր, որ գիրքը բառացի թարգմանութիւն է: Ահա այս խնդիրն է, որ բաւական ծանրակշիռ է և անկասկած շատերի ուշադրութիւնը կրգրաւի, քանի որ յայտնուեց գրքի թարգմանած լինելը:

Այդ անձի յուշատետրից քաղելով մի քանի օրինակներ այստեղ կըղնենք:

Օրինակներ. Գասագիրք կրօնի Ս. ք. Սահակեանց Նոր-Աւիտի, 1890. էջ 7:

«Հրեշտակների բերանով (Աստուած) յայտնում է կուսին երկնքի և երկրի համար պատրաստած այս մեծ ուրախութիւնը և որոշում մանկան անունը (Յիսուս Քրիստոս): Աւետարանի մէջ չէ ասած հրեշտակների, այլ «միայն Գաբրիէլ հրեշտակն է յիշուած տես. Ղուկ. գլ. Ա. 26. «առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Սասունձոյի քաղաք մի Գալիլեացւոյ ևն»: Շորունակութեան մէջ եզակի է թողել. «կոյսը հաւատում է հրեշտակի խոստման...» Թարգմանիչը չէ հասկացել բնագիրը, այնտեղ եզակի է ասուած. «Durch seinen Boten verkündet er ihr im voraus...»:

Սակայն թարգմանիչը սխալ թարգմանութեամբ աւելի մեծ «յանցանք» է գործել. օր. էջ 169. «Աստուած այդ սարսափելի յանցանքը նրա համար է տուել, որպէս զի իւր գործերը նրանով յայտնուին»: Աստուած տալիս է «յանցանք», Աստուած յանցանք չի տալիս. բնագրի մէջ էլ «Unglück. բառն է գրած, որ կնշանակէ «դժբախտութիւն», տւրեմն թարգմանութիւնն է սխալ:

Էջ. 189: Աղքատ Ղաղարոսի մասին: Տկար էր, անտուն. անտէր, ոչ ոք չունէր բացի մի շնից: Աւետ. Ղուկ. գլ. ԺԶ. 21. «այլ և շունք գային և լիզէին զլէրս նորա», բայց բնագրի մէջ էլ այլ կերպ է ասած. էջ. 110: «Er (Lazarus) war arbeitsunfähig, darum Bettler, ohne Obdach, ohne Freund. mit Ausnahme der Hunde, ohne Freuden...» «Նա անկարող էր աշխատելու, ուստի աղքատ էր, առանց օթեանի, առանց բարեկամի, բացառութեամբ շների, առանց ուրախութեան...» բնագրի մէջ

չէ ասած, որ նա մի շուն ունէր, այլ նրա մօտ կային շներ...:

Մի քանի տեղ էլ բնագրին հետեւելով է սխալուել, օր. էջ. 115. «Հարուստը չէ կարող մտնել երկնից արքայութիւնը, այնպէս՝ ինչպէս բեռնաւորած ուղտը չէ կարող պարսպի փոքր դռնովն անցնել» բացատրելու համար ծանօթութիւն է տալիս. «Այն ժամանակուայ դաստակերտները պարիսպները փոքր դռներ ունէին, այնպէս որ բեռնաւորուած ուղտը սողալով հազիւ կարող էր ծնկալոք մտնել»: Կարծում ենք դժուար հասկանալու տեղերը զիւրաւ հասկանալու համար, մենք իրաւունք չունինք բնագիրը փոխել, իսկ Աւետարանի բնագրի մէջ ասած է «Ընդ ծակ ասղան», և այդ թարգմանութիւնն էլ կայ բոլոր լեզուներով:

Վերջապէս առաջ բերենք մի կէտ ևս, որից երևում է թէ թարգմանիչը մեր սլաոմութեան մի էական գէպքն էլ առաջ բերելիս մեծ սխալանքի մէջ է ընկել: Օր. էջ. 112: Մեր Ալգար թագաւորը ևս ընդունել է Յիսուսին և սա առաջին թագաւորն է այդ կողմից: Հայ ժողովուրդն էլ Յիսուսից 300 տարի յետոյ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով ընդունեց (քրիստոնէութիւնը) և այնպէս խոստացաւ Յիսուսին հետեւող լինել: Մեր եկեղեցին հրպարտ է իւր առաքելագիր լինելովը, ս. Թադէոս և Բարթոլոմէոս առաքելները տալինն եղան Հայերիս մէջ քրիստոնէութեան ճշմարտութիւնը քարոզողները, նոցա ցանած սերմերը աճելով աճեցին, մինչև դուրս եկաւ Գրիգոր Լուսաւորիչը, և քրիստոնեայ հալածուած Հայ ժողովրդին ազատեց, քրիստոնէութիւնը պետութեան կրօն դարձրեց:

Ընթերցողը տեսնում է, որ առաջ բերած օրինակներից երեքը գերմաներէն լեզուի սխալ հասկանալուց է առաջ եկել, մենք հասողուած ենք այդ տեսակ սխալներ շատ կան, բայց այժմ դժբախտաբար ժամանակ և յարմարութիւն չունինք այդ բանի վրայ ուշադրութիւն դարձնելու: Պարտք ենք համարում նկատել նաև, որ Հ. Սահակը երկրորդ տպագրութեան մէջ ինչ ինչ բաներ փոխել է, բայց մենք մեր ձեռին ունէինք առաջի հրատարակութիւնը:

Բայց որպէսզի մեր Թարգմանութեան մասին ասածները լոկ
խօսքեր չլինին, իրար հանդէպ կը դնենք գերմաներէն բնագիրը
և հայերէն Թարգմանութիւնը:

Կրօնուսոյցների չին - Ուխտի ուղեցոյցը բաղկացած է 70 գլխից,
չորս մեծ հատուածների բաժանուած. մենք առաջ կը բերենք իւ-
րաքանչիւր հատուածի սկզբի և վերջի խօսքերը:

I.

Ա.

URGESCHICHTE.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ.

§ 1.

1. Die Schöpfung der Welt und
des Menschen.

A. Die Schöpfung der Welt. (1.
Mos 1)

Աշխարհի ստեղծագործութիւ-
նը և մարդու ստեղծագործու-
թիւնը:

Ա.

ZIEL: Ich will euch erzählen,
wie die Welt gemacht wurde.

ՆՊԱՏԱԿ: Ես ձեզ պէտք է պատ-
մեմ: Թէ ինչպէս Աստուած աշ-
խարհս ստեղծել է:

I.

I. Habt ihr denn schon einmal die
Welt gesehen? Wo denn, wann
denn? was ist denn alles auf der
Welt?....

Ձեզանից ո՞րն է աշխարհ տեսել,
ո՞րտեղ, ե՞րբ, ի՞նչ էք տեսել աշ-
խարհիս մէջ.....

V. Welche Menschen haltet ihr für hoffärtig?... wodurch konnten wohl die Menschen Demut lernen vor Gott? (Gewitter, Jahreszeiten, Hungersnot, Wassernot, Erdbeben, Krankheit, Tod...)

(Cf. Rich. Staude. Präparationen etc. p 3—29.)

V. Ի՞նչ տեսակ մարդկանց կարելի է ամբարտաւան անուանել: ... Ի՞նչ միջոցով կարող են մարդիկ հեղութիւն ուսանիլ Աստուծոյ առաջ. (փոթորիկ, տարուայ եղանակներ, սով, երաշտութիւն, երկրաշարժ, ժանտախտ)

(Ս. ք. Սահակեանց. Ուղեցոյց Էն էջ 1—42.)

Բ.

ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա.

ԱՐԱՆԱՄ

§ 7.

7. Abrahams Berufung.

Աստուած կանչու մէ Աբրահամին:

ZIEL. Ich will euch eine Geschichte erzählen von dem frommen Abraham, der seine Heimat verlassen sollte.

ՆՊԱՏԱԿ. Ես ձեզ այսօր պէտք է պատմեմ բարեպաշտ Աբրահամի մասին, որը իւր հայրենիքից պէտք է հեռանար:

I.

I. Wir kennen schon andere fromme Leute (Beispiele) und auch gottlose Leute (Beispiel).

Մեզ յայտնի են և ուրիշ բարեպաշտ մարդիկ զոր. նոյնպէս և չար մարդիկ զոր:

Zusammenstellung, Ordnung und Einprägung des aus der Urgeschichte und Patriarchengeschichte gewonnenen ethisch-religösen, kulturgeschichtli-

Համախմբել և կարգաւորել նախապատմական և նահապետների դարերի բարոյական կրօնական, կուլտուրական-պատմական և աշխարհագրական նիւ-

chen und geographischen Materialen.

Besonders wichtig ist die Gruppierung der religiösen und sittlichen Grundgedanken unter allgemeinere Gesichtspuncte und die allseitige Verwebung derselben mit sämtlichen von ihnen getroffenen konkreten Stoffen—eine Arbeit, die natürlich schon auf den vierten und fünften Stufen derfrühern Einheiten angebahnt werden muss. (ibid. p. 30—147)

Թերը: (Նոյն էջ 42—214):

Հետևեալ հատուածը, որ կայ գերմաներէնի մէջ և պակասում է թարգմանութեան մէջ, չպէտք է կարծել ապա, թէ թարգմանիչը մի որ և է ինքնուրոյնութիւն է արտայայտել, այլ նա մեզ անհասկանալի պատճառով իրան թող է տալիս մի քանի տեղ ինքնակամ վարուել մի հեղինակի գործի հետ:

III. RICHTERGESCHICHTE.

ԴԱՏԱԻՈՐՆԵՐԻ ԴԱՐ.

I. Moses.

Մ ո վ ս է ս

§ 31.

31. Die Bedrückung des Volkes Israel in Aegypten.

ZIEL. Wie es den Nachkommen Iakobs den „Israeliten“ nach dem Tode Iosephs ging.

Խորայէլի նեղութիւնը Եգիպտոսում:

ՆՊԱՏԱԿ. Թէ՛ Յ Վ/սէփի մահուանից յետոյ Յակովբի յետաքանդի «Խորայէլացոց» բանը ոնց է գնում:

I. „Israeliter“. Warum heissen die Nachkommen Iakobs Israeliten? (Bei uns wohnen auch Israeliten.) Israel muss ein (Bei) Name Iakobs (cf Karl der grosse) gewesen sein

I. Ինչո՞ւ Յակովբի յետաքանդը Խորայէլացի են կոչուում (մեզ մօտ և՛ս բնակւում են Խորայէլացիք): Երեւի Խորայէլ անունը մի տիպոս կամ մականունն է (ինչպէ՛ս մեծն Ներսէս):

V.

V. Was muss ein rechtes Kind denken, wenn es von seinen Eltern gestraft wird? Jeder Mensch kann in seiner Familie ein Samuel (Lehrer) werden Böse Beispele verderben gute Sitten (aber nicht immer, warum?) spr. 23. 15. Sir. 30. 1. kol. 3. 20.—gebt mir passende Sprüche an und

beweist dass sie passen. ibid. p. 148—232.

Ի՞նչ պիտի մտածէ խելօք տղան երբ նորա ծնողները պատժում են իրան- Ամենայն ոք իւր ընտանիքի մէջ Սամուէլ (սւսուցիչ) պիտի լինի վատ օրինակը՝ վշացնում է բարի սովորութիւնները (բայց ոչ միշտ, ինչո՞ւ)։

Դարձեալ բայ է թողուած։
նոյն էջ 215—346։

Դ.

IV. KÖNIGSGESCHICHTE.

ԹԱԳԱԻՌՆԵՐԻ ԴԱՐ.

Ա.

I. Saul.

ՍԱԻՌԻՂ.

§ 47.

19. Saul wird König,

ՍԱԻՌԻՂ, ԴԱՌՆՈՒՄ Է ԹԱԳԱԻՌ:

ZIEL. Das Volk Israel verlangt einen König.

ՆՊԱՏԱԿ. Իսրայելի ժողովուրդը թագաւոր է պահանջում:

I.

I. Wie kam wohl das Volk zu diesem Verlangen?...

Ի՞նչը ստիպեց ժողովրդին թագաւոր պահանջելու ...:

V.

X. Kennt ihr noch andere Menschen, die bis ans Ende beharrten, die bis den Tod...

Մանօթ են ձեզ արդեօք այդպիսի մարդիկ, որոնք մինչև վերջը, մինչև ի մահն են սպասել ...

Disposition des gesamten historischen Stoffes (mit Einflechtung der chronologischen Daten) nach allerlei, von den Schülern aufzustellenden Gesichtspunkten ...

ibid. p. 233—315.

ԴԱՍԱՆԱՍԻՐԵԼ Ամբողջ պատմական նիւթը (թուականները մոռանալու չէ) աշակերտների ձեռքով: Նիւթը շատ տեսակէտից կարելի է դասաւորել: Պէտք է ազատութիւն տալ սաներին... Նոյն էջ 347—475:

Եւ այդ ամբողջ առաջին հատորը վերջանում է հետեւեալ մասերով:

1. Die Chronologie
2. Der geographische Stoff
3. Der culturgeschichtliche Stoff.

1. Ժամանակագրութիւն.
2. Աշխարհագրական նիւթ.
3. Կուլտուրական պատմական նիւթ.

4. Die ethisch—religiösen Sätze.

4. Բարոյական — Կրօնական իմաստներ:

Առաջին հատորի մասին այսքանը բաւական համարելով՝ անցնենք երկրորդին ցոյց տալու համար, որ ընտրած սկզբունքին հաստատ հետեւող Հայր Ս. Տէր Սահակեանը իւր միանգամ բռնած ճանապարհից ոչ մի կերպ չէ շեղուել, թէև փոքր ի շատէ ինքնուրոյնութիւն արտայայտելու գիւրութիւններ ունէր, որովհետև առաջի հատորի հրատարակութիւնից յետոյ բաւական ժամանակ է անցել և կեանքի փորձերը նրան շատ բան կլինէին սուրբորցրած: Ամբողջ գրքի մէջ մէկ նորութիւն է, ինչ որ չունի բնագիրը, որ արժանապատիւ Ս. քահանայ մերցնելով ուրիշ ձեռնարկներից մի քանի իրաւամբ հետաքրքիր հնագիտական անօթների, մակարդակների և ն պատկերներ մոցրել է իւր գրքի մէջ, որով բնագրի հասկանալը մանուկների համար շատ դիւրանում է:

Այդ բանով վերջացնելով մեր տռելիքը Հին Ուխտի ուղեցոյցի մասին, աւելորդ չեմ համարում կրկին անգամ յիշել, որ Սրբազան պատմութեան Հին Ուխտի գիրքն էլ դարձեալ թարգմանութիւն է նոյն Շտաուդէի գրքի: Ահա թէ ինչպէս:

Dr. Richard Staude.

Die biblische Geschichte des Alten Testamentes.

Vorwort

Die Zusammenstellung von biblischen Geschichten bietet den Text dar, welcher den gleichzeitig erschienenen Präparationen „des Verfassers zu Grunde liegt.

I. URGESCHICHTE.

1. Die Schöpfung der Welt und des Menschen.

A. 1. Am Anfang schuf Gott Himmel und Erde, und die Erde war wüst und leer, und es war finster ...

Math. 24, 13. Wer beharret bis an das Ende, der wird selig ...
Ies. 54. 10. Es sollen wohl Berge weichen und Hügel hinfallen, aber meine Gnade soll nicht von dir weichen und der Band meines Friedens soll nicht hinfallen, spricht der Herr, dein Erbarmer. p. 124.

Ս. Ք. ՍաՀակեանց աշխատասիրեց:

Արքազան պատմութիւն շին Ուխտի:

Ազդ

Այս գրքոյկի (Արքազան պատմութիւն) նիւթի մշակութիւնը տպագրուած է առանձին—«Դասագիրք կրօնի» անունով:

Ա.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐ:

§ 1.

Աշխարհիս տրարչագործութիւնը և մարդու ստեղծագործութիւնը:

Ա.

Առտուած սկզբում ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն էր անպատրաստ խաւարով ծածկուած ...:

Եւ զերջանում է

Որ համբերեացն (համբերեացէ) իսպառ, նա կեցցէ: «Մատ. Ի. 13. Ոչ սպառնալեօք իմովք շարժել զերինս, և փոխել զլեզուս».
«Ոչ ողորմութիւն իմ պակասեացի ի քէն և ոչ ուխտ խաշաղութեան քոյ անցցէ: Էջ 182»

Այժմ՝ երկրորդ մասը. սա ունի 60 գլուխ և բաժանուած է երեք հատուածների: Արժանապատիւ քահանայն թարգմանել և հրատարակել է դեռ նրա մի մասը այն էլ առանձին, առանձին գրքոյկներով: Երկրորդ հատորի, երկրորդ մասի Ա. տետրն է, որ այժմ շնորհակալութեամբ նուէր է ստացել թէ Մայր Աթոռի մատենադարանը և թէ Արարատի խմբագրութիւնը: Այդ մասը մեզ տալիս է բնագրի § 41-ից մինչև § 49 բնագրի թարգմանութիւնը: Նախընթացի համաձայն այստեղ էլ գնենք բնագիրը և թարգմանութիւնը իրար հանդէպ: Առաջին հատորի համեմատութեամբ երկրորդը այն տարբերութիւնը ունի, որ սրանում նկարները թւով քիչ են, բայց տպագրութիւնը աւելի լաւ է:

DAS LEBEN IESU.

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ:

I.

I.

§ 1.

1. DIE GEBURT IESU.

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆՈՒԸ:

ZIEL. Ueberschrift.

ՆՊԱՏԱԿ. Վերնագիրը:

I.

I. Eine eigentliche Analyse ist hier nicht nothwendig, da im Folgenden nichts Neues dargeboten wird, weil die Geburtsgeschichte aus den frühern, an die kirchlichen Feste angeschlossenen, rein erbaulichen Besprechungen des Lebens Iesu den Kindern schon bekannt ist und daher von ihnen selbst erzählt werden kann

Հայ մանուկներին անձանօթ չէ Յիսուսի ծննդեան պատմութիւնը: Նրանք թէ տանը, թէ եկեղեցում և թէ ուսումնարանական տօների ժամանակ յաճախ լսած կը լինեն (զորօրինակ «լամբարտիայը» մանգալիս, 2ր. րօհնեաց տօնին, ծնողներէց...) տօնիս նշանակութեանը վերաբերմամբ շատ տեղեկութիւններ . . . :

ներ . . . :

V.

.. V. Was sagt ihr zu der Behauptung: Heutzutage, wo der

Ի՞նչ էք կարծում, Յիսուսի ժամանակից, որ արդէն 1800

Herr Christus schon seit 1800 Jahren eingezogen ist auf Erden, brauchen wir keine Vorbereitung mehr?

(Präparationen etc. p. 1—13. (Ուղեցոյց էջ 1—30):

II.

II.

§ 7.

6. Die Taufe Iesu

Յիսուսի մկրտութիւնը.

Ziel. Iesus und Iohannes der Täufer.

Նպատակ. Յիսուս և Յովհաննէս
Մկրտիչ:

I.

I. Was wird Iesus über die Wirk-
samkeit des Iohannes gedacht
haben? ...

Ի՞նչ մտածելիս կլինէր Յիսուս
Յովհաննէսի գործունէութեան
մասին . . . :

V.

V. Wie können wir das wahre,
ewige Leben gewinnen? Wie müs-
sen wir zeigen, dass wir schon
hier im ewigen Leben sind? ...

Մենք ի՞նչպէս կարող ենք ձեռ-
մարիտ յաւիտենական կեանք
ձեռք բերել: Ի՞նչպէս պէտք է
ցոյց տանք, որ այս տեղ էլ, հան-
գերձեալումն էլ յաւիտենական
կեանք կայ . . . :

Թարգմանութեան վերջը գեռ չկայ. յոյս ունենք, որ այն էլ
շուտով լոյս կը տեսնի, բայց մենք սպասում ենք հաստատապէս
որ այն ժամանակ գրքի ճակատին գրած կը լինի ոչ թէ «գասա-
խօսեց» կամ «աշխատասիրեց» բառերը, այլ թէ թարգմանեց
հայերէն բառը, որի նշանակութիւնն է մի օտար լեզուով գրած
կամ արտասանած բան մի ուրիշ օտար լեզուի վերածել, առանց
միաբեր, ձեռք փոխելու, ինչպէս են Հայր Սահակի մեզ ներկայացրած
գրքերը:

Թէ՛ւ այդ դէպքում Հայր Սահակը՝ իրաւ է ստիպուած կլինի հրաժարուել «հեղինակի» պատուարներ տնտեսական, սակայն լաւ թարգմանիչ լինելը և թարգմանութեան համար յարմար ընտրութիւն անելն էլ փոքր ծառայութիւն չէ. մեր ուսուցիչներէց բարեխղճերն էլ իմանալով, որ իւրեանց առաջ օտար մանուկներէ համար շարադրած մի գիրք ունին, կը ձգտեն ըստ տեղւոյն ազատուելով բնագրից, յարմարուել մեր մանուկներին մասնոր հասկացողութեան: Յամենայն դէպս ի սրտէ ցանկալի էր հայերիս միջից անհետացած տեսնել ուրիշի սեփականութիւն իւրացնելու պահարակելի սովորութիւնը, մի արատ, որ նկատուում է գծախտաբար կրթութիւն ստացածների մէջ և որը հայի արատների ցանկից դուրս է եղել: Ապացոյցի համար հեռուն չգնանք. օր. «Նոր—Գար» արտատպում է «Արարատ»ից մի յօդուած, բայց է թողնում թարգմանչի փոքրիկ ծանօթութիւնը և բաւականա՜նում է ասելու «որ այդ յօդուածը կոյ նաև «Արարատ»-ի մէջ»:

Մօտաւորապէս Հայր Սահակի գրքերի տեսակին պէտք է վերաբերել նաև նորերումս լոյս տեսած Գիւտ ք. Աղանեանցի մի հրատարակութիւնը, այն է «Գիւտն Հայոց Պատմութեան» գիրքը, որը արժանացել է մրցանակի 1892 թւի Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ժամանակ, այն էլ ոչ թէ գրքի ներքին արժանիքի պատճառաւ, որովհետև նորա պակասում են, այլ որովհետև՝

1). «Գիւտ ք. Աղանեանց ծանօթ է կրօնի ուսման համար իւր աշխատասիրած գրքերովը» և՛

2). որ նա «Ազգային պատմութեան վաւերական աղբիւրներու կամ նիւթերու հաւաքման ոչ նուազ գծուարին գործոյն աշխատած է, ՈՐՊԷՍ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԻԻՐ ՅԱՌԱՋԱԲԱՆԻՆ ՄԷՋ: Բայց տեղի պակասութեան պատճառաւ այդ գրքի մասին մեր ասելիքը թողնում ենք հետեւեալ համարին: